ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ք. Գավառ ***11.09.2019թ. ժամը 11.00***

Նախագահում էր Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանը, մասնակցում էին մարզի խորհրդի 57 անդամներից 48-ը և 9-ը համայնքների ղեկավարների տեղակալներ:

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի հրավերով մասնակցում էին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Նարեկ Գրիգորյանը, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղար Սևակ Խլղաթյանը, գլխավոր քարտուղարի տեղակալ Ալբերտ Աղեկյանը, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի խորհրդական Անուշավան Ղազարյանը և օգնական Նարեկ Մանուկյանը, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի վարչությունների պետերը և բաժինների վարիչները, իրավապահ մարմինների ու հասարակական կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի զինվորական կոմիսարիատի, «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության ներկայացուցիչները և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության գյուղատնտեսական ծրագրերի իրականացման վարչության Գեղարքունիքի մարզային համակարգող Խորեն Բաղալյանը:

Օրակարգում՝

1. 2019 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների մասին:

/Զեկ. Յուրա Մուշեղյան - մարզպետարանի աշխատակազմ ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ/

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի մասին:

/Զեկ. Համբարձում Համբարձումյան – մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ/

3. 2019 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների մասին:

/Զեկ. Վանիկ Հարությունյան – մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ/

4. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում 2019 թվականի սեպտեմբերի 14-ին անցկացվելիք մարզային շաբաթօրյակի նախապատրաստական աշխատանքների մասին:

/Զեկ. Վանիկ Հարությունյան – մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ/

5. Այլ հարցեր:

Ելույթ ունեցավ՝

Արման Ղազարյանը - Զոլաքար համայնքի ղեկավար

Հայտարարությունով հանդես եկան՝

Կարեն Զազյանը - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

Համբարձում Համբարձումյանը - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Յուրա Մուշեղյանը - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ

Դավիթ Վարդանյանը - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի զինվորական կոմիսարիատի առաջատար մասնագետ

Խորեն Բաղալյանը - ՀՀ էկոնոմիկայի նախարարության գյուղատնտեսական ծրագրերի իրականացման վարչության Գեղարքունիքի մարզային համակարգող

Մարզի խորհրդի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Գնել Սանոսյանը:

Ընդունվեց ի գիտություն, որ 2019 թվականի ոռոգման սեզոնը Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում կազմակերպվել է պատշաճ:

1. Առաջարկվեց Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարներին՝

1) ամենօրյա աշխատանքներ տանել համայնքների 2019 թվականի բյուջեների սեփական եկամուտների /հողի հարկ, գույքահարկ, տեղական տուրքեր, հողի և գույքի վարձակալությունից եկամուտներ/ հավաքագրման ու աշխատավարձերի գծով կուտակված պարտքերը մարելու և սեփական եկամուտների համամասնություններով պահանջվող ցուցանիշներն ապահովելու համար.

2) համագործակցել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ու Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի զինվորական կոմիսարիատի հետ և ակտիվ աշխատանքներ տանել համայնքներում 2019 թվականի սեպտեմբերի 24-ից հոկտեմբերի 5-ը կայանալիք զորավարժությունները պատշաճ կազմակերպելու համար.

3) 2019 թվականի սեպտեմբերի 14-ի մարզային շաբաթօրյակը պատշաճ կազմակերպելու և իրականացնելու համար աշխատանքներ տանել համայնքների ազգաբնակչության, համայնքապետարանների և ՀՈԱԿ-ների աշխատողների, համայնքների տարածքներում գործող կազմակերպությունների ու տնտեսվարող սուբյեկտների հետ և ապահովել նրանց մասնակցությունը շաբաթօրյակին.

4) ապահովել համայնքների ազգաբնակչության ակտիվ մասնակցությունը 2019 թվականի սեպտեմբերի 14-ին Սևանա լճի ափին (Սևանի թերակղզում) կայանալիք «Էկո ֆիշ ֆեստ» փառատոնին.

5) հետևողական լինել, որ մարզի համայնքներին հատկացված մարզի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների միջին նորոգման արդյունքում ֆրեզված ասֆալտ-բետոնյա խառնուրդը օգտագործվի միայն ներհամայնքային ճանապարհների վերանորգման համար.

6) հետևել, որ մարզի համայնքների վարչական տարածքներում գործող ավազահանքերից դուրս եկող ավազով բարձված ավտոմեքենաները լինեն անհրաժեշտ ձևով ծածկված.

7) ամենօրյա հսկողություն իրականացնել համայնքներում սուբվենցիոն ծրագրերով իրականացվող աշխատանքների որակի նկատմամբ.

8) խոշոր եղջերավոր անասունների մեջ վարակիչ հիվանդությունների տարածումը կանխարգելելու համար համայնքների անասնաբույժների հետ միասին աշխատանքներ տանել համայնքից համայնք հիվանդ անասունների տեղաշարժը բացառելու համար.

9) սեղմ ժամկետում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան ներկայացնել՝
ա. հանրակրթությունից դուրս մնացած երեխաների թիվը և պատճառները.
բ. կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների տվյալները.

10) համայնքների ազգաբնակչությանը տեղեկացնել 2019 թ. սեպտեմբերի 16-ից 23-ը Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լ.Քալանթարի անվան դրամատիկական թատրոնում կազմակերպվող «Գավառ» թատերական փառատոնի մասին և այդ օրերին կազմակերպել փառատոնին ներկա գտնվելու ցանկություն հայտնած բնակիչների տեղափոխումը Գավառ համայնք:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ Հասմիկ Շահբազյանին՝ համապետական և մարզային զանգվածային լրատվամիջոցներով լուսաբանել 2019 թվականի սեպտեմբերի 14-ի մարզային շանբաթօրյակը և «Էկո ֆիշ ֆեստ» ու «Գավառ» թատերական փառատոնները:

ՄԱՐԶՊԵՏ՝ ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ